"ՀՈՎԻՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ" ՊՈԱԿ

Հաստատում եմ՝

«31 »08 2023.

ԴԱՍՂԵԿԻ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

2023-2024 ուստարի

Vll- դասարանի

ԴԱՍՂԵԿ՝ Կիմա Սարգսյան

ԴԱՍԱՐԱՆԻ ԿԱԶՄԸ

Դասարանում սովորում է 4 աշակերտ, չոսն էլ՝ տղա: Գեղեցիկ ու համերաշխ մթնոլորտ է: Անհրաժեշտ է սերտ համագործակցել ծնողների և դասավանդող ուսուցիչների հետ: Աշակերտներից 3-ը սոցիալապես անապահով ընտանիքից են: Հարվածային է մեկ աշակերտ՝ Հովհաննես Հարությունյանը: Տեսողական խնդիր ունեցող՝ մեկ աշակերտ:

Աշակերտի անուն, ազգանուն	Հարությունյան Հովհաննես Գևորգի	Ներսեսյան Վաչագան Արմենի	Ներսեսյան Գարեգին Արսենի	Պապիկյան Գրիգոր Արայի
Դպրոց ընդ. թիվը	2017	2017	2017	2019
Աշ. շարժի համարը	173	175	178	195
Ծննդյան թիվ	27.01.2011	17.12.2010	17.03.2010	10.08.2011
Սեռը	արական	արական	արական	արական
Հասցեն	Գ. Հովիտ, փ.1,տ.58	Գ. Հովիտ, փ.1.,տ.59	Գ. Հովիտ, փ.2,տ.47	Գ. Հովիտ, փ.1,նրբ.3,տ.2
Հեռախոսի համար	098834962	094635609	094635609	077815613
Ծնողի աշխատ.	Արտագնա	Արտագնա	Արտագնա	Արտագնա

վայր	աշխատանք	աշխատանք	աշխատանք	աշխատանք
Ընտանիքի սոցիալ. վիճակը	Բավարար	Անապահով	Անապահով	Անապահով

Ամիսը	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը
Սեպտեմբեր	Բաշխել դասագրքերը: Գիտելիքի օր:
	Կահավորել դասասենյակը համաձայն հակահամաճարակային ուղեցույցի:
	Հրավիրել ծնողական ժողով . 1. Ընտրել ծնողական խորհրդի կազմը: 2.Ներկայացնել ուսուցման կազմակերպման գործընթացը կորոնավիրուսային հիվանդության պայմաններում:
	Մասնակցել դպրոցի, սպորտդահլիճի մաքրման աշխատանքներին: Պատրաստվել ֆրանսիացի մեր բարերարներին դիմավորելու միջոցառմանը:
	Ուշադրություն դարձնել աշակերտների արտահագուստին:
	Ստեղծել ներկոլեկտիվային ինքնավարության մարմիններ՝ դասարանի խորհրդի նախագահ, հերթապահներ, ընտրել խորհրդի կազմը:
	Ձևավորել համերաշխ աշակերտական կոլեկտիվ:
	Ապահովել աշակերտ-դպրոց-ծնող սերտ կապը:
	Միջոցառում «Անկախ Հայաստան» թեմայով:
	Անցկացնել պլանավորած զրույցներ դասղեկի ժամին:
Հոկտեմբեր	Զրույց նվիրված ուսուցչի տոնին:
	Դասալսումներ կատարել տարբեր առականերից :
	Համագործակցել դասավանդող ուսուցիչների հետ:
	Աշխատանքներ տանել ուսման մեջ թերացող աշակերտների հետ:
	Դասարանի ընդհանուր տեսքի բարելավում:
	Անցկացնել պլանավորած զրույցներ դասղեկի ժամերին: Ազնիվ և անկեղծ հարաբերություններ մեր դասարանում:
Նոյեմբեր	Ստուգել աշակերտների սանիտարահիգենիկ վիճակը:
	Աշխատանք տանել հաճախակի ուշացող և բացակայող աշակերտների հետ:
	Կազմակերպել անհատական աշխատանքներ խնդրահարույց աշակերտների հետ :
	Ուսուցանել աշակերտներին արտակարգ իրավիճակների ժամանակ համատասխան գործողություններ:

	Հետևել օրագրերի լրացմանը
	Անցկացնել պլանավորած զրույցներ դասղեկի ժամերին:
Դեկտեմբեր	Դասալսումներ կատարել բոլոր առարկաներից:
	Համագործակցել դասավանդող ուսուցիչների հետ:
	Աշխատանքներ տանել ուսման մեջ թերացող աշակերտների հետ :
	Տեղեկացնել ծնողներին իրենց երեխաների ստացած գնահատականների մասին:
	Նախապատրաստվել կիսամյակային գրավոր աշխատանքներին:
	1-ին կիսամյակի ամփոփում
Հունվար	Հրավիրել ծնողական ժողով:
	Ձևավորել առանձնահատուկ վերաբերմունք պետության , պետական խորհրդանիշերի նկատմամբ:
	Զրույց «Հայոց բանակը» թեմայով : Ծանոթացնել երեխաներին ազգային հերոսների հետ:
	Վերահսկել կարգապահական կանոնները :
	Անցկացնել պլանավորած զրույցներ դասղեկի ժամերին:
Փետրվար	Մշտապես հաշվի առնել սովորողների անհատական և տարիքային առանձնահատկությունները:
	Զրույց նվիրված գրքի տոնին:
	Կազմակերպել ուումանադաստիարակչական, գիտաճանաչողական էքսկուրսիաներ:
	Աշխատանքներ տանել հետ մնացող աշակերտների հետ:
Մարտ	Դաստիարակչական աշխատանք կատարել դասարանի սովորողների շրջանում՝ սերտորեն համագործակցելով մյուս մանկավարժական աշխատողների հետ:
	Ակտիվորեն մասնակցել դպրոցի հասարակական աշխատանքներին:
	Ապահովել աշակերտ - դպրոց – ծնող սերտ կապը, նպաստել դպրոցի և ընտանիքի մանկավարժական միասնական պահանջների ապահովմանը սովորողների նկատմամբ:
	Զրույց նվիրված գեղեցկության տոնին :
	Իրականացնել բարոյահիրավական գիտակցության ձևավորման ուղղությամբ տարվող միջոցառումների համակարգ/էթիկական ու իրավական զրույցներ լավագույն մարդկանց մասին, հանդիպումներ, բանավեճեր, կինոդիտումներ ու քննարկումներ:
	Անցկացնել պլանավորած զրույցներ դասղեկի ժամերին:
Ապրիլ	Հետևել աշակերտների առաջադիմությանը, զրուցել նրանց ծնողների հետ:
	Դասալսումներ կատարել բոլոր առարկաներից:
	Զրուցել դասավանդող ուսուցիչների հետ աշակերտների վարքի և առաջադիմության մասին:
	Թեմատիկ զրույց անցկացնել « Հայոց Մեծ Եղեռն» թեմայով:
	Ստուգել դասագրքերի , տետրերի վիճակն ու առկայությունը :
	Կազմակերպել սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ:
	Անցկացնել պլանավորած զրույցներ դասղեկի ժամերին:

Այիս	Հետևել աշակերտների անձնական հիգիենային:
	Զրույց նվիրված մայիսյան հաղթանակներին:
	Անհրաժեշտության դեպքում օգնել և աջակցել դժվարություններ ունեցող աշակերտներին:
	Կազմակերպել դասարանին հատկացված դպրոցամերձ տարածքի մաքրումը:
	Կազմակերպել ուումանադաստիարակչական և ժամանցային էքսկուրսիաներ:
	Համագործակցել դասավանդող ուսուցիչների հետ:
	Նախապատրաստվել կիսամյակային գրավոր աշխատանքներին:
Հունիս	2-րդ կիսամյակի արդյունքների ամփոփում:
	Հանձնել դասագրքերը:
	Հրավիրել ծնողական ժողով:
	Բացահայտենք մեր հայրենիքը:Էքսկուրսիա

ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄԵՐԸ

Շաբաթ	**Թեման**	**Մեթոդ**	**Կատարող**
1	Գիտելիքը ուժ է	զրույց	դասղեկ
2	Խաչվերաց տոնի խորհուրդը	զրույց	Ուս. Ղազարյան
3	ՀՀ Անկախության օր	միջոցառում	Ռ. Ասատրյան
4	Անկեղծ և ազնիվ հարաբերություններ մեր դասարանում	զրույց	դասղեկ
5	ՈՒսուցչի միջազգային օր	զրույց	դասղեկ
6	Ո՞վ է իսկական ընկերը	զրույց	դասղեկ
7	Ոսկեզօծ աշուն	միջոցառում	դասղեկ
8	Ի՞նչ է պատասխանատվության զգացումը	զրույց	դասղեկ
9	Ինչպես խուսափել վտանգից	բանավեճ	դասղեկ
10	Գեղեցիկը մեր աչքերով:	զրույց	դասղեկ
11	Քաղցր սուտ, թե դառը ճշմարտություն	բանավեճ	դասղեկ
12	Իմ երազանքը	զրույց	դասղեկ

13	Ինչպես պաշտպանվել տարերային աղետներից	զրույց	Ռ. Ասատրյան
14	Ամանորի խորհուրդը	զրույց	դասղեկ
15	Ամանորյա միջոցառում	միջոցառում	դասղեկ
16	Առաջին կիսամյակի առաջադիմության արդյունքների քննարկում:	քննարկում	դասղեկ
17	Վնասակար սովորությունները և դրանց հետևանքները:	զրույց	դասղեկ
18	Հայոց հզոր բանակ	միջոցառում	Ռ. Ասատրյան
19	Ո՞վ է իմ իդեալը:	զրույց	դասղեկ
20	Բոլորս տարբեր ենք, բոլորս ապրում ենք միասին:	բանավեճ	դասղեկ
21	Ինչ լավ ու բարի գործ եմ կատարել	զրույց	դասղեկ
22	Ժպտացեք, և աշխարհը կժպտա ձեզ	զրույց	դասղեկ
23	Ինչ է կանֆլիկտը	զրույց	դասղեկ
24	Կանանց միջազգային օր	միջոցառում	դասղեկ
25	Գարուն է գալիս	զրույց	դասղեկ
26	Ինչպես հասնել հաջողության	բանավեճ	դասղեկ
27	Սուրբ Զատիկի խորհուրդը	միջոցառում	դասղեկ
28	Մեր փոքրիկ բարեկամները	զրույց	դասղեկ
29	Մարդ կարող է ուժեղ լինել , եթե ճանաչում և մեծարում է իր արմատները: Ազնավուրը հաղթանակի ու պարտության, կյանքի ու մահվան մասին:	զրույց	դասղեկ
30	Ցեղասպանության զոհերի հիշատակի օր	միջոցառում	դասղեկ
31	Նրա մասին ով ամեն օր իմ կողքին է	զրույց	դասղեկ
32	Իմ կատարած լավ գործերը:	զրույց	դասղեկ
33	Ինչ ես արել, որ ուղղես ընկերոջդ սխալը:	բանավեճ	դասղեկ
34	Բացահայտենք մեր հայրենիքը: Էքսկուրսիա:		դասղեկ

Ծնողական խորհրդի կազմը

Նախագահ՝ Հարությունյան Հերիքնազ

Անդամներ՝ 1. Պապիկյան Հերմինե
Անդամներ՝ 2. Ներսեսյան Քրիստինե

Ծնողական ժողովներ

1. Ժողովը սկսել բարձր տրամադրությամբ
2. Ծնողներին ներկայացնելժողովի օրակարգը
3. Խոսել նախ դրական հարցերի մասին
4. Առանձին աշակերտների խնդիրները չդարձնել քննարկման թեմա
5. Աշակերտի բացասական կողմը ներկայացնելիս լինել նրբանկատ
6. Լսել ծնողների առաջարկությունները:

ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԸ ՏԱՐՎԱ ԿՏՐՎԱԾՔՈՎ

Ժողով	Թեմա	Նպատակը	Ժամկետը
1	Ուսումնական մեկնարկի կազմակերպչական հարցեր: Զրույց՝«Ծնող լինելու արվեստը»:	Դպրոցընտանիք կապի ամրապնդում:Ծնողը երեխայի ամենակարևոր ուսուցիչն է: Ոչ մի հակասություն չի կարող լինել դպրոցի և ընտանիքի միջև, եթե դպրոցն ու ծնողները հաջողությամբ համագործակցեն:	Սեպտեմբեր 07.09.2023
2	Առաջին կիսամյակ արդյունքների ամփոփում; Ա.Կրթության դերն ու նշանակությունը: Բ.Առաջադիմության հետ կապված հարցերի քննարկում:	Ծնողները գիտակցեն,հասարակության մտավոր ներուժն այն գրավականն է,որը ապահովում է,ինչպես պետության հզորությունը,այնպես էլ յուրաքանչյուր քաղաքացու և ընտանիքի բարեկեցությունը:	Դեկտեմբեր
3	Աշակերտների առաջադիմության բարձրացման խնդիրները:	Օգնություն ծնողներին: Բարձրացնել կապը ուսուցիչ- ծնող	Մարտ

	Համակարգչի դերը երեխաների կյանքում:	հարաբերության:	
4	20232024 ուսումնական տարվա ամփոփում: Խնդիրների և դրանց լուծման ուղիների առաջադրում:	Դպրոց-ընտանիք կապի ամրապնդում:	Մայիս
5			

Դասղեկա ժամի օրվա պլան I

Դասի թեման-Գիտելիքի օր
Անցկացման ձևը-Զրույց –Գիտելիքը ուժ է
Նպատակը-Աշակերտների մեջ սերմանել գիտելիքի արժեքն ու կարևորությունը
Կահավորումը- Գրքեր, ձեռնարկներ, նկարներ
Ընթացքը-Դասղեկի ժամը անցկացվեց դասարանում, ներկա էին բոլոր աշակորտները: դասղեկը ներկայացրեց
Գիտելիքի և դպրության օրը պետական տոն է, որը նշվում է սեպտեմբերի 1-ին՝ նոր ուսումնական տարվա առաջին օրը։ Նշվում է 1984 թվականից, հաստատվել է ԽՍՀՄ Բարձրագույն խորհրդի նախագահության՝ հունիսի 15-ի № 373-11 «Սեպտեմբերի 1-ը համաժողովրդական տոն՝ Գիտելիքի օր հայտարարելու մասին» հրամանագրով[1]: Պետական տոն է
Հայաստանում, Ռուսաստանում, Ուկրաինայում, Բելառուսում և Ղազախստանում:

Սեպտեմբերի 1-ին ուսումնական տարին սկսելու ավանդույթը հին ակունքներ ունի։ 4-րդ դարում՝ 325 թվականի մայիսի 20-ին, Բյութանիայի Նիկիա քաղաքում բյուզանդական կայսր Կոստանդիանոս Ա Մեծի հրամանով գումարվել է Նիկիայի Ա տիեզերական ժողովը, որտեղ որոշում կայացվեց նոր տարին սկսել սեպտեմբերի մեկից:

Ըստ ավանդության Արիստակեսը Հայաստան է բերում Նիկիական ժողովի որոշումները և ներկայացնում Գրիգոր Լուսավորչին: Վերջինս դրանք ներմուծում է Հայ եկեղեցու դավանաբանության և ծիսակարգի մեջ։ Եվ քանի որ այդ ժամանակաշրջանում բոլոր դպրոցները գործում էին եկեղեցիներին կից, նոր ուսումնական տարին ևս սկսել են նշել սեպտեմբերի մեկին:

Դասղեկա ժամի օրվա պլան I I

Դասի թեման-Խաչվերաց տոն
Անցկացման ձևը-զեկուցում, զրույց, ցուցադրություններ
Նպատակը-Ծանոթացնել եկեղեցական տոներին
Կահավորումը- պաստառներ, գրքեր
Ընթացքը- Դասղեկի ժամը անցկացվեց դասարանում, ներկա էին բոլոր աշակորտները, հրավիրված էր Եկեղեցու պատմության ուսուցչուհի Երազիկ Ղազարյանը: Ղազարյանը ներկայացրեց,

Խաչվերաց, քրիստոնեական տոն, որը տոնվում է Հայ Առաքելական Եկեղեցու, Կաթոլիկ և Ուղղափառ եկեղեցիների կողմից։

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնում է Խաչվերացի տոնը սեպտեմբերի 11-17-ն ընկած ժամանակահատվածում, կիրակի օրը։ Խաչվերացը տաղավար հինգերորդ և վերջին տոնն է։ Խաչվերացը տոնվում է ի հիշատակ Քրիստոսի խաչափայտի՝ պարսկական գերությունից Երուսաղեմ վերադարձի և Գողգոթայում կանգնեցման (վերացման)։ Այստեղից էլ տոնը կոչվում է Խաչվերաց։
Խաչվերացի տոնը մեզ համար նախևառաջ հարությամբ նորոգվելու խորհուրդն ունի։ Ըստ Գրիգոր Տաթևացու՝ Խաչը դարձավ երկնքի և երկրի միջև եղած վիհը միացնող կամուրջը, *«դրախտի դռները բացողն ու երկնային արքայությունը որպես ժառանգություն տվողը»*։ 614 թ. Պարսկաստանի Խոսրով Բ Փարվեզ թագավորը հարձակվում է Երուսաղեմի վրա, ավերում այն, սրի քաշում ժողովրդին, մեծ թվով գերիներ տանում։ Որպես անարգանք քրիստոնյաներին՝ Սուրբ Հարության տաճարից գերեվարվում և Պարսկաստան է տարվում նաև խաչափայտը։ Պարսկաստանում խաչափայտի զորությամբ շատերը դարձի են գալիս, մկրտվում և դառնում քրիստոնյա։ Խաչափայտը գերության մեջ է մնում 14 տարի։ Խաչի վերադարձը Երուսաղեմ[խմբագրել | խմբագրել կոդը]

628 թ. Բյուզանդիայի Հերակլիոս կայսրը քրիստոնեական մի հսկա բանակով հարձակվում է պարսիկների վրա, ազատագրում Ս. Խաչը և այն վերադարձնում նախկին վայրը։ Որպես պատմական վկայություն՝ նշենք, որ հայ ժողովուրդն անմասն չէ խաչի ազատագրման գործից։ Կայսրին ռազմական օժանդակություն է ցույց տվել նաև հունական մասի հայոց զորքը՝ Մժեժ Գնունու գլխավորությամբ։

Խաչը հանդիսավոր թափորով տարվում է Երուսաղեմ՝ Փոքր Ասիայի վրայով, ու բնական էր, որ այն անցնելու էր պատմական Հայաստանով։ Թափորն անցնում է Կարին (Էրզրում) քաղաքով, իսկ Կարնո լեռների ստորոտներից մեկում, ուր խաչի դրված տեղից վճիտ աղբյուր է բխում, կառուցվում է Խաչավանքի եկեղեցին։ Կայսրը խաչափայտը սրբությամբ երեք տարի Կ.Պոլսում պահելուց հետո անձամբ, կառքի մեջ ծնկած, այն ձեռքերում բռնած, Երուսաղեմ է տանում և իր ուսի վրա դրած Գողգոթայի գագաթը հանելով՝ բարձրացնում է Սուրբ Հարության վերանորոգված տաճարում՝ ի տես բոլոր քրիստոնյաների։ Այդ ժամանակից էլ վերջնականորեն հաստատվեց և սկսվեց մեծ հանդիսավորությամբ տոնվել խաչի բարձրացման հիշատակը՝ Խաչվերացը։

Խաչվերացի տոնման կարգը Հայ Առաքելական Եկեղեցում

Գիշերը կատարվում է հսկում, Սրբությունը դնում են սուրբ սեղանին։ Քահանաները զգեստավորված գալիս են ատյան և երգում «Որ զանարատ բազուկս Քո» շարականը։ Օրվա երեքսրբյանն է. «Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա՛ մեզ»։
Ապա Խաչով և Ավետարանով թափոր են կազմում։

Դասղեկա ժամի օրվա պլան I I I

Դասի թեման- ՀՀ Անկախության օր
Անցկացման ձևը-
Նպատակը-
Կահավորումը-
Ընթացքը - Դասղեկի ժամը անցկացվեց դասարանում, ներկա էին բոլոր աշակորտները: դասղեկը ներկայացրեց
Հայաստանի անկախության տոն, Հայաստանի պետական և ազգային տոներից մեկը: Անկախության տոնը Հայաստանում նշվում է ամեն տարի սեպտեմբերի 21-ին: 1990 թվականի օգոստոսի 23-ին Հայաստանի գերագույն խորհուրդը ընդունել է Հայաստանի անկախության հռչակագիրը, որտեղ նշված էր, որ ՀԽՍՀ-ն կազմալուծվում է և ձևավորվում է նոր պետություն՝ Հայաստանի Հանրապետությունը: 1991 թվականի սեպտեմբերի 21-ին հայ ժողովուրդը անկախության հանրաքվեի ժամանակ կողմ է քվեարկել ԽՍՀՄ կազմից դուրս գալու օգտին: 1991 թվականի նոյեմբերին Լևոն Տեր-Պետրոսյանը ընտրվել է ՀՀ առաջին նախագահ: Հայաստանը լիակատար անկախություն է ձեռք բերել նույն տարվա դեկտեմբերի 26-ին՝ ԽՍՀՄ կազմալուծման արդյունքում: Յուրաքանչյուր տարի մայրաքաղաք Երևանում և Հայաստանի բոլոր քաղաքներում սեպտեմբերի 21-ին կազմակերպվում են տոնական միջոցառումներ, իսկ յուրաքանչյուր հինգ տարին մեկ Երևանի Հանրապետության հրապարակում կազմակերպվում է ռազմական շքերթ: Եղավ մտքերի փոխարինում, դասղեկի հետ միասին աշակերտները մասնակցեցին բակում կայանալիք Ռ. Ասատրյանի կազմակերպած միջոցառմանը:

Դասղեկա ժամի օրվա պլան IV

Դասի թեման- Անկեղծ և ազնիվ հարաբերություններ մեր դասարանում
Անցկացման ձևը-Զրույց, քննարկում
Նպատակը-ձևավորել առողջ մթնոլորդ
Կահավորումը- Պաստառներ
Ընթացքը
«Անկեղծ ընկերություն» այս արտահայտությանը շատ հաճախ կարող ենք հանդիպել՝ գրքերում, ֆիլմերում, առօրյայում ինչու չէ նաև մուլտերում:Մեզ շրջապատող աշխարհը և մարդիկ իրենց յուրովի ընկալումն ունեն այս հարցի շուրջ:Իսկ ո՞րն է անկեղծ ընկերությունը, կա արդյոք մի կանոն, որով կարելի է առաջնորդվել, հաճախ են մարդիկ իրենք իրենց տալիս այս հարցը:Մարդը վերստին օժտված է հավատարիմ և անկեղծ ընկեր լինելու ունակությամբ:Ցքավոք ոչ բոլորն են կարողանում այդ ունակությունը ճիշ օգտագործել և հաճախ այն ընկերությունը, որը թվում է անկեղծ ու ազնիվ լինում է ճիշտ հակառակը:Այդ անկեղծության շղարշի տակ հաճախ թաքնված է լինում խարդախություն, անազնվություն, որը մարդկանց վանում է այն մտքից, որ գոյություն ունի անկեղծ ընկերություն:Մարդիկ խուսափում են ընկեր ձեռք բերելուց:Բայց չէ որ ոչ բոլորն են այդ ընդունակությունը սխալ օգտագործում, իհարկե կան մարդիկ որոնք ճիշտ են օգտագործում ու կարողանում են ստեղծել անկեղծ ընկերություն ու պահպանել այն:Դե իհարկե գոյություն ունի անկեղծ ընկերություն ուղղակի պետք է ճիշտ ընտրել ընկերներին:Բոլորս էլ քաջ գիտակցում ենք, որ չի կարելի մի քանիսի արարքով դատել բոլորին:Եթե բոլորին դատենք նույն կերպ, ապա կարող ենք կորցնել մեր լավ ընկերներին և նրանց որոնց գուցե դեռ չենք էլ գտել:

Ընկերությունը չունի կանոններ, օրենքներ ու կարգեր: Ընկերությունը չի հարցնում աղջիկ ու տղա: Ընկերության մեջ չկան տարիքային սահմանափակումներ: Ես ունեմ և վեց, յոթ տարեկան ընկերներ և իմ հասակակից ընկերներ և տասնութ, քսան տարեկան ընկերներ: Ասում են «Ընկերոջ հինն է լավը, հագոստի նորը» ես այս ասացվածքի հետ շատ համաձայն եմ, որովհետև հին ընկերը գիտի քո մասին ամենինչ և հաստատ կարող եմ ասել, եթե նա անկեղծ ընկեր է ապա չի կարող քեզ երբեք խաբել կամ ինչ-որ բան թաքցնել: Իսկ նոր ընկերոջ մասին դու չես կարող հաստատ համոզված լինես, որ անկեղծ ընկերություն կանի քեզ հետ: Ճիշտ է, պետք է նոր ընկերներ ձեռք բերելը, բայց պետք չէ այդ նոր ընկերների հետ շատ անկեղծ լինել: Նոր ընկերների անկեղծությունը կամ գաղտնապահությունը ստուգելու համալ պետք է մի փոքրիկ գաղտնիք վստահել նրան և ինչ, որ կերպ ստուգել, թե նա ինչ, որ բանի դիմաց կամ մեկ ուրիշից ինչ-որ գաղտնիք իմանալու դիմաց նա կասի քո գաղտնիքը այլ մարդու թե ոչ: Այսպիսի մի ասացվածք էլ կա ընկերության մասին՝ «Ասա ով է ընկերդ, ասեմ, թե ով ես դու» այս ասացվածքը նրա մասին է, որ պետք է մարդ ընկերություն անի իր նման մարդու հետ, որ իրենք նույն մտածելակերպը ունենան, նույն բնավորությունը ունենան, ընկերությունը պետք է լինի ոչ թե գիտակցված, այլ հոգեպես: Ընկերությունը շատ կարևոր բան է մարդու համար, դրա համար մարդ պետք է ճիշտ ընկեր ունենա:
Աշակերտները գրավոր ներկայացրեցին իրենց լավ ընկերներին: Բաժանված թերթիկների վրա գրեցին այն հատկությունները, որոնք ամենակարևոր են ընկերության մեջ:

Դասղեկա ժամի օրվա պլան V

Դասի թեման- ՈՒսուցչի միջազգային օր
Անցկացման ձևը-Զեկուցում, քննարկում
Նպատակը- Գնահատել ուսուցչի աշխատանքը
Կահավորումը- Պաստառներ,
Ընթացքը-

Ուսուցչի միջազգային օր ուսուցիչներին նվիրված տոն, որը նշվում է ամեն տարի սկսած՝ 1994 թվականի հոկտեմբերի 5-ին: Տոնի գլխավոր առաքելությունը ուսուցիչներին աջակցելն է, համոզվելը, որ ուսուցիչները կարողանում են բավարարել ապագա սերնդի պահանջները: Օրվա ընտրությունը կապված էր այն հանգամանքի հետ, որ 1966 թվականի հոկտեմբերի 5-ին Փարիզում ՅՈՒՆԵՍԿՕ-ի և Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից հրավիրված համատեղ կոնֆերանսում ընդունվել է «Ուսուցչի կարգավիճակի հետ կապված ուղեցույց» (Recommendation concerning the Status of Teachers) վերտառությամբ փաստաթուղթը, ինչն էլ ուսուցիչների աշխատանքը կարգավորող առաջին միջազգային փաստաթուղթն էր:

Ըստ ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ Ուսուցչի օրը խորհրդանշում է ուսուցիչների՝ կրթության և զարգացման բնագավառում ունեցած հսկայական ներդման ճանաչումը, ընդունումը և գնահատումը:

Ուսուցիչների տոնը նշվում է ավելի քան 100 երկրներում, այդ թվում նաև Հայաստանում: Էդյուքեյշն Ինթերնեշնլի և կազմի մեջ մտնող 401 անդամ-կազմակերպությունների ջանքերով տոնը լայնորեն ճանաչվում է: Ամեն տարի ԷԻ-ն սկսում է տոնի հասարակական ճանաչումը բարձրացնող արշավ՝ ուսուցիչների ներդրումը ընդգծելու համար:
Հայաստանում Ուսուցչի օրը ՀՀ կառավարության 2001 թվականին հոկտեմբերի 1-ի N 919 որոշմամբ նշվում էր հոկտեմբերի առաջին կիրակի օրը, որպես «Ուսուցչի տոն»: Հետագայում 2010 թվականի մայիսի 21-ի օրենքի Պ-911-21.05.2010-ԳԿ-010/0 լրացմամբ այն տոնվում է հոկտեմբերի 5-ին:

Դասղեկա ժամի օրվա պլան VI

Դասի թեման- Ո՞վ է իսկական ընկերը
Անցկացման ձևը-զրույց
Նպատակը-
Կահավորումը-
Ընթացքը
Այս կյանքում իրական ընկերներ շատ քիչ են լինում, բայց այնուամենայնիվ լինում են: Իրոք մեր կյանքը գորշ ու անիմաստ կլիներ առանց ընկերների: Ես շատ ուրախ եմ, որ կյանքը ինձ հնարավորություն է տվել ունենալ իրական ընկերներ: Եվ այսպես ուզում եմ ձեզ ներկայացնել, թե ինչպիսին պետք է լինի իրական ընկերը: Իրական ընկերը նա է, ով …

Ոչ միայն կարողանում է խոսել, այլ նաև լսել ու ճիշտ խորհուրդներ տալ քեզ:
Միշտ հավատում է քո ուժերին, նույնիսկ այն ժամանակ ,երբ դու ինքդ չես հավատում քեզ:
Ասում է քեզ քո սխալների մասին ու օգնում է ուղղել դրանք, այլ ոչ թե լռում է:
Քո մի հայացքից հասկանաում է, թե դու ինչ ես զգում:
Օգնում է քեզ, առանց ինչ-որ բան ակնկալելու:
Ուրախանում է քո հաջողությունների ու ձեռքբերումների համար:
Ամեն ինչ գիտի քո մասին, բայց միևնույն է սիրում է քեզ:
Միշտ ասում է ճշմարտությունը, ինչքան էլ դա ցավոտ լինի:
Միշտ ներում է ամեն ինչ:
Գիտի, թե դու երբ ունես նրա կարիքը ու այդ պահերին նա միշտ քո կողքին է լինում:
Սիրում և ընդունում է քեզ այնպիսին, ինչպիսին կաս ու չի փորձում փոխել քեզ:
Չի բամբասում քո մասին ու թույլ չի տալիս, որ ուրիշները վատաբանեն ձեզ:

Մի խելացի մարդ ասել է "Ավելի հեշտ է մեռնել ընկերոջ համար, քան գտնել այնպիսի ընկեր, որի համար արժե մեռնել":
Հիշեք իսկական ընկերները հավերժ են, ամբողջ կյանքի համար: Իսկական ընկեր ունենալու համար նախ ինքդ պետք է կարողանաս լավ ընկեր լինել: Լավ

ընկերությունը ամենաթանկ բանն է աշխարհում: Ուզում եմ ասել իմ բոլոր իրական ընկերներին, որ ես ձեզ շատ եմ սիրում ու ուզում եմ, որ ես էլ ձեզ համար լինեմ այնպիսի ընկեր, ինչպիսին դուք եք ինձ համար:Շնորհակալ եմ ձեզ, որ կաք, որ իմ կողքին եք, որ միշտ օգնում եք ինձ: Առանց ձեզ ես չէի լինի այն ինչ կամ: Ես երջանիկ եմ, որ ունեմ ձեզ պես ընկերներ:

Դասղեկա ժամի օրվա պլան VII

Դասի թեման- Ոսկեզօծ աշուն
Անցկացման ձևը-
Նպատակը-
Կահավորումը-
Ընթացքը

Դասղեկա ժամի օրվա պլան VIII

Դասի թեման- Ի՞նչ է պատասխանատվության զգացումը
Անցկացման ձևը-
Նպատակը-
Կահավորումը-
Ընթացքը

Դասղեկա ժամի օրվա պլան I

Դասի թեման- Ինչպես խուսափել վտանգից
Անցկացման ձևը-
Նպատակը-
Կահավորումը-
Ընթացքը

Դասղեկա ժամի օրվա պլան VI

Դասի թեման- Գեղեցիկը մեր աչքերով:
Անցկացման ձևը-
Նպատակը-
Կահավորումը-
Ընթացքը

Մեզ շրջապատող ամեն ինչ գեղեցիկ է:Գեղեցկությունը կարելի է համարել մեր կյանքի կիսով չափ կարևորագույն մասնիկ:Ես կարծում եմ՝գեղեցկությունը երևույթ է,որը կարող ենք տեսնել : Ես համարում եմ,որ

գեղեցկությունը ինչ-որ չափի ուժ է, երբ մենք գեղեցիկ իր կամ գեղեցիկ բնություն ենք տեսնում ակամայից ուղղվում ենք դեպի գեղեցիկը: Կյանքն էլ է գեղեցիկ իր գաղտնիքներով ու դժվարություններով: Մենք ասում ենք ԳԵՂԵՑԻԿ,բայց չենք հասկանում այդ վեց տառի տակ թաքնված գաղտնիքը:Գաղտնիք…որ ոչ միայն բոլորն են հասկանում…Հասկանում են միայն գեղեցիկը ճիշտ ընկալողները… Ինձ համար կա մի գեղեցկություն դա իմ մայրն է, ով ամեն ինչից և՛ ամենքից թանկ է ինձ համար; Ես իմ մորը երբեք չեմ համեմատի կամ փոխի ուրիշ գեղեցկության հետ, որովհետև իմ մայրը ինձ համար ամենագեղեցիկ և թանկ բանն է աշխարհում, որ ես ունեմ;

Ինձ համար գեղեցիկ է ամեն բան, թե՛ ինձ շրջապատող իրերը, բնությունը, և թե՛ իմ շրջապատում գտնվող մարդիկ։ Բայց այդ ամենից բացի ինձ համար ամենագեղեցիկ իմ մայրն է։ Ինձ թվում է, որ միայն ինձ մոտ այդպես չէ։ Բոլորն էլ իրենց մայրերին գեղեցիկ և թանկ են համարում ամեն ինչից:

Գեղեցիկը մշտապես համեմատության մեջ է, և այն կարող է առաջացնել զայրույթ և անբավարարություն, երբ մեկը չի կարողանում հասնել գեղեցկության։ Մարդիկ, ովքեր չեն համապատասխանում գեղեցիկի իդեալին կարող են օտարանալ իրենց հասարակության շրջանակներում։ Իմ կարծիքով մարդն ունի արտաքին և ներքին գեղեցկություն:

Ներքին գեղեցկությունը ներառում է մի շարք հոգեբանական գործոններ, ինչպիսիք են անհատականությունը, խելքը, քաղաքավարությունը, նրբագեղությունը, խարիզման, ազնվությունն ու պատշաճությունը, իսկ արտաքին գեղեցկությունը ենթադրում է արտաքին ֆիզիկական ատրիբուտները, որոնք գնահատվում են գեղագիտական հիմքով:

Դասղեկա ժամի օրվա պլան VI

Դասի թեման- Քաղցր սուտ, թե դառը ճշմարտություն
Անցկացման ձևը-
Նպատակը-
Կահավորումը-
Ընթացքը

Ինչու՞ ենք մենք ստում, ինչու՞ են մեզ ստում: Մեր բոլորի հետ էլ պատահել է, որ խաբեության զոհ ենք դարձել:

Ինչի՞ համար է այդ սուտը և ի՞նչն է մեզ դրդում, որ սուտ խոսենք:

Քաղցր սուտ: Ստել հանուն ինչ-որ մեկի բարօրության, օրինակ, երբ ասում ենք. <<Ես դա արել եմ հանուն քեզ>>, այնուհետև սկսում ենք հորինել և փնտրել, թե ինչու է այդ սուտը ավելի օգտակար այդ անձի համար, այլ ոչ մեզ համար: Արդյունքում հաճախ ստում ենք և՛ այդ անձին և՛ ինքներս մեզ: Քաղցր սուտն ունի իր աստիճանները՝ կախված այն բանից, թե ինչ գնով է այն արվում:

Մենք հիմնականում ստում ենք այն դեպքերում, երբ ցանկանում ենք բարձրացնել մեր անձը: Հատկապես դա տեղի է ունենում նոր ծանոթությունների ժամանակ, ավելի հաճախ զույգերի հետ: Երբ տղան ծանոթանում է աղջկա հետ, սկսում է չափազանցնել իր առավելությունները, հորինել տարբեր լեգենդներ աղջկան գրավելու համար, ասում, թե ինչքան համապատասխան զույգեր են իրենք, հետո միայն, երբ հարաբերությունները խորանում են, և ամեն ինչ ջրի երես է դուրս գալիս, հաջորդում է հիասթափություն, դեպրեսիա, թախիծ: Դա կարող է լինել ոչ միայն սիրային հարաբերություններում, այլև գործնական, ընկերական և այլն:

Կան նաև անձինք, ովքեր մշտապես կարիք ունեն սուտ ասելու, նրանց կյանքը իրականում մեծ կեղծիքի է նման: Այս դեպքում անհրաժեշտ է հոգեբանի անմիջական միջամտությունը:

Իմ կարծիքով, չկա մեկը, ով սուտ չխոսա: Ամեն մեկս էլ մեկին կամ մի քանիսին ստել ենք: Ես փոքր ժամանակ մեկին ստեցի և մտածեցի, որ դա այդքան էլ ստելուն նման չէր, որովհետև ես դեռ չէի հասկանում՝ ինչ է նշանակում ստել: Եղել են դեպքեր, որ մենք ստել ենք, բայց վերածել այն կատակի, օրինակ՝ մենք առաջ ստում էինք մեր դասընկերներին, թե հիմա որ դասաժամն է, և նրանց սխալ դասաժամն էինք ասում, որը վերածում էինք կատակի: Շատերը ստում են, մտածելով , որ ստելը ճիշտ կլինի, բայց ինչո՞ւ, ինչո՞ւ եթե կարելի է ճիշտն ասել: Այդ ժամանակ մենք ինքներս մեզ կստենք ոչ թե դիմացինին կամ որևէ մեկին: Օրինակ, եղել են դեպքեր, որ ես և իմ ընկերուհի Անին իրար ստել ենք, բայց, միևնույնն է, վերջում երկուսս էլ անկեղծացել ենք: Ոչ մեկ թող չմտածի, որ անգամ փոքրիկ սուտը սուտ չի համարվում, ցանկացած սուտ կլինի փոքրիկ կամ մեծ, չմտածեք, թե դա սուտ չէ: Ում է պետք ձեր ստելը, եթե վերջում, միևնույնն է, կասեք ճշմարտությունը, բայց լինում են մարդիկ, ովքեր չեն ասում իրականությունը, պահում են իրենց մեջ, վախենում կամ ամաչում են պատմել: Ինքերդ ձեզ ստելով ոչնչի չեք հասնի, երբեք չմտածեք, որ խաբելով լավ բանի կհասնեք և այդպես ճիշտ կլինի:

Դասղեկա ժամի օրվա պլան VI

Դասի թեման- Իմ երազանքը
Անցկացման ձևը-
Նպատակը-
Կահավորումը-
Ընթացքը

Դասղեկա ժամի օրվա պլան VI

Դասի թեման- Ինչպես պաշտպանվել տարերային աղետներից
Անցկացման ձևը-

Նպատակը-
Կահավորումը-
Ընթացքը

Դասղեկա ժամի օրվա պլան VI

Դասի թեման- Ամանորի խորհուրդը
Անցկացման ձևը-
Նպատակը-
Կահավորումը-
Ընթացքը

Տարեմուտի (մեզանում ամանոր, կաղանդ, տարեգլուխ) տոնակատարությունը գալիս է դարերի խորքից և հնուց տարբեր ժողովուրդների գլխավոր տոներից է եղել և շարունակում է այդպիսին մնալ: Ըստ հայոց եկեղեցու մեծահռչակ վարդապետ սուրբ Գրիգոր Տաթևացու՝ Բաբելոնյան աշտարակաշինությունից հետո ազգերը «յուրաքանչյուրն իր տեղը՝ հեռավոր կամ մոտավոր աշխարհ մտնելուն պես՝ այդ օրը որպես տարեմուտ կարգեցին և իրենց որդիներին պատվիրեցին պատվել այդ օրը նվերներ տալով»:
Հին հայերը Նոր տարին կամ Ամանորը դիմավորել են ամռանը, սակայն 18-րդ դարում Ամենայն Հայոց կաթողիկոս Սիմեոն Երևանցու տոմարով հայերը տարվա սկիզբը և Ամանորը սկսեցին նշել հունվարի 1-ին:
Այժմ բոլոր քրիստոնյա ազգերը Տարեմուտը տոնում են հունվարի 1-ին: Մինչ Քրիստոսի աշխարհ գալը ողջ մարդկությունը գերի էր դժոխքում՝ կաշկանդված հավիտենական մահվամբ: Քրիստոս ծնվելով հունվար ամսին՝ ազատեց մարդկանց դժոխքից , մահից՝ առաջնորդելով դեպի Երկնքի արքայություն:
Ահա թե ինչու է հունվարը տարվա առաջին ամիսը ու տարեմուտը համարվում: Հունվարի 1-ը մեր Տեր Աստծո ծննդյան ամսվա առաջին օրն է: Հունվարի 1-ին բոլոր եկեղեցիներում սուրբ Պատարագ է մատուցվում:
Հունվար ամսվա անվան ստուգաբանության և նշանակության վերաբերյալ մի ավանդություն կա: Ըստ դրա՝ հեթանոս հռոմեացիները Յանուս անունով աստված են ունեցել՝ 2 դեմքով՝ մեկը դեպի առաջ նայող, մյուսը՝ դեպի ետ: Այդ երկվությունը խորհրդանշում էր անցյալն ու ապագան, սկիզբն ու վերջը: Այս նշանակությունն էլ, հավանաբար, կապված է հունվարի՝ տարվա առաջին ամիսը լինելու հետ:
Ամանորը քրիստոնյաների համար կարևորագույն խորհուրդ ունի՝ Աստծուց անցնող տարվա համար շնորհակալ լինելու, խաղաղությամբ դեպի գալիք գնալու: Իհարկե, ամանորյա տոների ողջ զորությունը Սուրբ Ծնունդն է՝ հույսի, հավատի, սիրո անսպառ աղբյուրը: Տարվա փոփոխությունը արժևորվում է Փրկչի ծննդյամբ, քանի որ Մանուկ Հիսուսի ծննդյամբ Աստծո արքայությունը հաստատվեց մեզանում, և մարդն իմաստավորեց իր գոյությունը:
Հայոց եկեղեցու սուրբ Հովհաննես Ոսկեբերանն ասում էր. «Կարծում են, որ եթե տարվա առաջին օրն ուրախության և հաճույքի մեջ անցկացվի, ապա տարին էլ այդպիսին կլինի: Բայց տարին երջանիկ կլինի ըստ ամենայնի ոչ թե այն պատճառով, որ հարբած ես եղել առաջին օրը, այլ որ առաջին և բոլոր օրերին աստվածահաճ կյանքով ապրես: Իսկ եթե առաքինանալու ջանք չգործադրես, այլ երջանկություն սպասես ամսագլխից և այդ օրերի հաշվարկից, ապա դրանից քեզ ոչ մի բարիք չի գա»:

Ամանորը մի շարք խորհորդներ ունի, որոնք, թվում է, թե պարզապես զարդարանքի մաս են, սակայն իրականում պարունակում են կրոնական հավատալիքի հստակ շեշտադրում:
Ամանորին բոլորը տոնածառ են զարդարում, որը դրախտի Կենաց ծառի խորհուրդն ունի: Քրիստոնեական աշխարհում այս ծառը կոչվում է նաև Ծննդյան ծառ, քանի որ կապվում է Կենդանի կենաց ծառի՝ Հիսուս Քրիստոսի հետ: Տոնածառի գագաթը զադարող աստղը խորհրդանշում է Բեթղեհեմյան աստղը, որը մոգերին առաջնորդում էր դեպի մսուր, որտեղ ծնվելու էր ամենքիս Փրկիչը: Եվ ինչպես մոգերն ընծաներ բերեցին Հիսուսին, այնպես էլ մենք ընծաներ ենք բերում Կենաց ծառին՝ այն զարդարելով:
Եղևնին ողողող լույսերը խորհրդանշում են հոգևոր լույսը, որով Փրկիչը լուսավորեց ողջ աշխարհը, իսկ բովանդակ փայլփլող եղևնին խորհրդանշում է շնորհների արքայությունը՝ Փրկչի Ծննդյամբ աշխարհին պարգևած:
Ամանորի գլխավոր խորհրդանիշներից մեկը Ձմեռ պապն է՝ (Դեդ Մորոզ, Սանտա Կլաուս) Ձմյուռնիա քաղաքի Սուրբ Նիկողայոս Սքանչելագործ հայրապետը: Ճշմարիտ հավատքն ու քրիստոնեական բոլոր առաքինությունները մարմնավորող այս սուրբը Ամանորի գիշերը այցելում է բոլորիս տները և իբրև ամանորյա անակնկալ ընծա մատուցում իր բարությունն ու ջերմությունը՝ դրանք միմյանց փոխանցելու պատգամով:
Իրավամբ ամանորը բոլոր տոներից ամենագեղեցիկն ու ամենասիրելին է և դրա պատճառը հետևյալն է՝ այն ողողված է Աստծո սիրով, լույսով և հրաշքներով:

Դասղեկա ժամի օրվա պլան VI

Դասի թեման- Ամանորյա միջոցառում

Անցկացման ձևը-
Նպատակը-
Կահավորումը-
Ընթացքը

Դասղեկա ժամի օրվա պլան VI

Դասի թեման- Առաջին կիսամյակի առաջադիմության արդյունքների քննարկում:
Անցկացման ձևը-
Նպատակը-
Կահավորումը-
Ընթացքը

Դասղեկա ժամի օրվա պլան VI

Դասի թեման- Վնասակար սովորությունները և դրանց հետևանքները:

Անցկացման ձևը-
Նպատակը-
Կահավորումը-
Ընթացքը

Դասղեկա ժամի օրվա պլան VI

Դասի թեման-Հայոց հզոր բանակ

Անցկացման ձևը-
Նպատակը-
Կահավորումը-
Ընթացքը

Դասղեկա ժամի օրվա պլան VI

Դասի թեման- Ո՞վ է իմ իդեալը:
Անցկացման ձևը-
Նպատակը-
Կահավորումը-
Ընթացքը

Դասղեկա ժամի օրվա պլան VI

Դասի թեման- Բոլորս տարբեր ենք, բոլորս ապրում ենք միասին:
Անցկացման ձևը-
Նպատակը-
Կահավորումը-
Ընթացքը

Դասղեկա ժամի օրվա պլան VI

Դասի թեման- Ինչ լավ ու բարի գործ եմ կատարել
Անցկացման ձևը-
Նպատակը-
Կահավորումը-
Ընթացքը

Դասղեկա ժամի օրվա պլան VI

Դասի թեման- Ժպտացեք, և աշխարհը կժպտա ձեզ
Անցկացման ձևը-
Նպատակը-
Կահավորումը-
Ընթացքը

Երջանկության և փողի հետևից անդադար վազքի մեջ մենք հաճախ մոռանում ենք, թե որքան կարևոր է ուղղակի ժպտալ. անկեղծ ժպիտը՝ առանց ոչ մի պայմանականության: Չէ որ, ոչինչ չի համեմատվի այն զգացմունքների հետ, ինչ մենք ունենում ենք հարազատ մարդու ժպիտը տեսնելիս: Ահա այս ժամանակ մենք սկսում

ենք գնահատել իրականությունը, որտեղ մենք ապրում ենք, մարդկանց որոնց մենք երջանիկ ենք դարձնում և մեր կյանքի բոլոր այն հիասքանչ պահերը, որոնք տեղ չէին անի նույնիսկ հարյուրավոր էջերի վրա: Այսօր ժպտալու համաշխարհային օրն է բարեկամներ: Ժպտացեք հաճախ և կարողացեք ուրախանալ հասարակ մանր երևույթներից, որ պատահում են ամեն օր: Ժպտալ կարող է յուրաքանչյուրը, օրինակ՝ Ձեր շունը, նույնիսկ ինքնաթիռը: Հիշե՛ք, բացարձակ կապ չունի թե քանի տարեկան եք, ինչ եք աշխատում և ինչ ազգության եք: Ժպիտ նվիրելը անգերազանցելի երջանկություն է: Նույնիսկ եթե Ձեր պատճառով ոչ ոք չի քնել, ժպտացե՛ք հասարակ մանրուքներին: Ժպիտը կարող է թուլացնել ցանկացած լարվածություն և աներևակայելի թարմություն հաղորդել: Ժպտալու առիթ տվեք. կարելի է ժպտալ լավագույն ընկերոջը, հավերժացնել այն լուսանկարի վրա: Նույնիսկ եթե ամեն ինչ ծրագրվածով չի ընթանում և, երբ թվում է ամենինչ կորած է ու այլևս ոչինչ ուղղել հնարավոր չէ, պետք է ուժ գտնել և ուղղակի ժպտալ և ամբողջ աշխարհը կժպտա Ձեզ: Ժպտացե՛ք բարեկամներ... Նյութի աղբյուրը՝ YN.am

Դասղեկա ժամի օրվա պլան VI

Դասի թեման- Ինչ է կանֆլիկտը
Անցկացման ձևը-
Նպատակը-
Կահավորումը-
Ընթացքը

Դասղեկա ժամի օրվա պլան VI

Դասի թեման-Կանանց միջազգային օր
Անցկացման ձևը-
Նպատակը-
Կահավորումը-
Ընթացքը

Դասղեկա ժամի օրվա պլան VI

Դասի թեման- Գարուն է գալիս
Անցկացման ձևը-
Նպատակը-
Կահավորումը-
Ընթացքը

Դասղեկա ժամի օրվա պլան VI

Դասի թեման-Ինչպես հասնել հաջողության
Անցկացման ձևը-
Նպատակը-
Կահավորումը-
Ընթացքը

Դասղեկա ժամի օրվա պլան VI

Դասի թեման- Սուրբ Զատիկի խորհուրդը
Անցկացման ձևը-
Նպատակը-
Կահավորումը-
Ընթացքը

-Քրիստոս յարեաւ ի մեռելոց… -Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի: Սկիզբ է առնում հրեաների կողմից այսօր նշվող Պասեք տոնից, որի ժամանակ ըստ քրիստոնեական դավանանքի 1-ին դարում (ստույգ թվականը վիճելի է՝ 27-33թթ. միջև ընկած ժամանակաշրջանում) Երուսաղեմում խաչվել և հարություն է առել Հիսուս Քրիստոսը: Պասեքը հրեաների կողմից ինչպես նախկինում այնպես էլ այսօր տոնվում է ի նշան եգիպտական գերությունից ազատագրման և մասնավորապես Հին Կտակարանում նկարագրվող այն դրվագի, երբ Աստվածը նոխազի արյան միջոցով զատեց իր ժողովրդին եգիպտացիների վրա ուղարկված աղետից՝ անդրանիկ զավակների կոտորածից: Համաձայն քրիստոնեական ուսմունքի՝ այդ իրադարձությունը նախանշան էր Հիսուս Քրիստոսի (Գառն Աստծո) կամովին մահվան ընդունման և իր արյան հեղման՝ հանուն մարդկության փրկության: Քրիստոնեական եկեղեցիները Հիսուս Քրիստոսի հարությունը տոնում է որպես զատիկ, որովհետև ըստ քրիստոնեական ուսմունքի Քրիստոսն է հավիտենական այն զոհը կամ պատարագը, որի միջոցով մարդն ստանում է մեղքերի թողություն, ապա՝ կյանք և հարություն: Պողոս առաքյալը Հիսուսին այդպես էլ կոչում է՝ զատիկ, «…քանզի Քրիստոս՝ մեր զատիկը, մորթվեց…»: Զատիկը շարժական տոն է, այսինքն յուրաքանչյուր տարի նրա նշման օրը փոխվում է: Հայ առաքելական եկեղեցին այն նշում է գարնան գիշերահավասարին հաջորդող լուսնի լրման առաջին կիրակի օրը, որն ընկնում է մարտի 22-ից հետո մինչև ապրիլի 26-ը (35 օր) ժամանակահատվածի վրա: Զատկին նախորդում է Ավագ շաբաթը: Զատկի հետ առնչվող գլխավոր արարողությունները սկսվում են Ավագ շաբաթվա շաբաթ օրը և ավարտվում երկուշաբթի: Շաբաթ երեկոյան մատուցվում է Քրիստոսի հարության ճրագալույցի կամ ճրագալույսի պատարագ, որով վերջանում է Զատկին նախորդած յոթ շաբաթ տևած Մեծ Պասի շրջանը: Պատարագի ավարտին հավատացյալները միմյանց ողջունում են «Քրիստոս հարյավ ի մեռելոց» ավետիսով և ստանում «Օրհնյալ է հարությունը Քրիստոսի» պատասխանը: Ժամերգություն է տեղի ունենում և Պատարագ մատուցվում և բուն զատկական Կիրակի օրը: Զատիկը տոնվում է ներկված հավկիթներով, և շատ արևելյան ուղղափառ քրիստոնեության հետևորդների մոտ՝ պասկայով: Հայերի մոտ տեղի են ունենում նաև հավկթախաղեր:

Դասղեկա ժամի օրվա պլան VI

Դասի թեման-Մեր փոքրիկ բարեկամները
Անցկացման ձևը-
Նպատակը-
Կահավորումը-
Ընթացքը

Հին ժամանակներից ի վեր մարդիկ ընտելացնում են կենդանիներին: Այսօր մեր կյանքի պայմանները բավականին փոխվել են, բայց, չնայած գիտության և տեխնիկայի առաջընթացներին, կենդանիները մեզ պետք են: Կենդանիները այնքան են կապվում մարդու հետ, որ նրանց սերը և հավատարմությունը օրինակ են դառնում շատերի համար: Շատ անգամ հավատարմության և անկեղծ սիրո դիմաց մենք պատասխանում ենք դաժան դավաճանությամբ: Այդպիսի դեպքերը հաճախակի երևույթ են դարձել: Ծնողները, երեխաների խնդրանքով կամ ձանձրույթից ելնելով, կենդանիներ են ընտելացնում՝ չգիտակցելով պատասխանատվության չափը: Քիչ ժամանակ անց, բախվելով խնդիրների հետ և չուզելով խնամել կենդանիներին, ուղղակի շպրտում են փողոց: Հիվանդ, քաղցած, անտուն, հոգնած, սպառված, նիհար «ջեկիները» դարձել են մեր քաղաքի փողոցային լանդշաֆտի սովորական հավելումները: Նրանք, ովքեր գոնե մի անգամ նայել են անտուն շան աչքերին, լավ գիտեն, թե ինչքան բարի, տխուր, կսկիծով լցված աչքեր կան: «Մենք պատասխանատու ենք նրանց համար, ում ընտելացրել ենք»,- աշխարհով մեկ հայտնի այս արտահայտությունը կցանկանայի փակցնել Ստեփանակերտի փողոցների պատերին: Թվում է, թե սա մանրուք է այն ծանրակշիռ խնդիրների համեմատ, որոնք կան այսօր: Բայց ամեն ինչ սկսվում է հենց մանրուքներից: Հենց այդ փոքր մարդկային քայլերն են ձևավորում «Մարդ» տեսակը:

Սա էլ է ի վերուստ տրված պատվիրան, որին պետք է հետևել: Երբ Աստված ստեղծեց կենդանական աշխարհը, բավականություն ստացավ իր գործից: Աստվածաշունչն ասում է՝ նա տեսավ, որ «դա լավ է» (Ծննդոց 1:21,25): Նրանք ունեն մեր սիրո, հոգատարության, խնամքի կարիքը: Չգիտեմ ով ինչպես է վարվում, իսկ *«Արդարը հոգ է տանում իր ընտանի կենդանու հոգու մասին, բայց ամբարիշտնե րի ողորմությունը դաժան է» (Առակներ 12:10):*

Դասղեկա ժամի օրվա պլան VI

Դասի թեման- Մարդ կարող է ուժեղ լինել , եթե ճանաչում և մեծարում է իր արմատները: Ազնավուրը հաղթանակի ու պարտության, կյանքի ու մահվան մասին:
Անցկացման ձևը-
Նպատակը-
Կահավորումը-

Ընթացքը

Դասղեկա ժամի օրվա պլան VI

Դասի թեման- Ցեղասպանության զոհերի հիշատակի օր
Անցկացման ձևը-
Նպատակը-
Կահավորումը-
Ընթացքը

Մեծ Եղեռնի զոհերի հիշատակի օր, նշվում է ամեն տարի ապրիլի 24-ին (1915-ի այդ օրը թուրքական իշխանությունները Կ. Պոլսում ձերբակալել և աքսորել են հայ մտավորականների մի մեծ խմբի)։ Մշտապես նշվել է սփյուռքահայ համայնքներում։ Խորհրդային Հայաստանում ցեղասպանության զոհերի հիշատակի օրն առաջին անգամ պետական մակարդակով նշվել է 1965-ի ապրիլի 24-ին՝ Մեծ եղեռնի 50-ամյա տարելիցին։

Երևանում տեղի է ունեցել բազմահազարանոց ցույց՝ Թուրքիայի կառավարող շրջանների հրեշավոր ոճրագործության դեմ բողոքի և պատմական արդարությունը վերականգնելու պահանջի կարգախոսներով։ Ցույցն ավարտվել է Կոմիտասի գերեզմանի մոտ հանրահավաքով։ Նույն օրը կայացել է ցեղասպանության հիշատակին նվիրված ժողով, որին մասնակցել են հասարակայնության, պետական մարմինների և հոգևորականության ներկայացուցիչներ։ Հանրապետության կառավարությունը որոշում է ընդունել Երևանում ցեղասպանության զոհերի հուշահամալիր կառուցելու մասին։ Մայրաքաղաքի Ծիծեռնակաբերդի բարձունքում Մեծ Եղեռնի զոհերի հուշահամալիրի կառուցումից հետո, ամեն տարի ապրիլի 24-ին համաժողովրդական երթ է կատարվում դեպի համալիր։ 1988-ի նոյեմբերի 22-ին ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը ընդունել է 1915-ի Հայոց ցեղասպանությունը դատապարտող օրենք, որով ապրիլի 24-ը հայտարարվել է Մեծ Եղեռնի զոհերի հիշատակի օր և համարվել ոչ աշխատանքային օր։

Դասղեկա ժամի օրվա պլան VI

Դասի թեման- Նրա մասին ով ամեն օր իմ կողքին է
Անցկացման ձևը-
Նպատակը-
Կահավորումը-
Ընթացքը

Ես իմ կյանքում չունեմ այնպիսի մի անձնավորություն, որին կցանկանայի նմանվել, քանի որ կարծում եմ, որ յուրաքանչյուր մարդ ունի իր սեփական կյանքը, մտածողությունը, ոճը, արդուզարդը, քայլվածքը… Այն, ինչ գեղեցկացնում է ուրիշին, միգուցե ուրիշին տգեղացնի։ Փորձում եմ իմ հարազատներից վերցնել նրանց դրական հատկանիշները, որոնք ավելի հոգեհարազատ են ինձ։ Պապիկս, տատիկս և հորաքույրներս եղել են մանկավարժներ, ցանկանում եմ նրանց նման լինել խելացի և վաստակավոր։ Ցանկանում եմ հայրիկիս նման լինել կարգ ու կանոնով, կոկիկ, ազնիվ, ընկերասեր, խելացի։ Մայրիկս, մորաքույրս և տատիկս նույնպես մանկավարժներ են։ Ցանկանում եմ մայրիկիս նման լինել ճշտապահ, պարտաճանաչ, գեղեցիկ, կոկիկ, մորաքրոջս նման հեզ, մեղմ բնավորության տեր անձնավորություն,

տատիկիս նման լավ մարդ, խելացի և հարգված անձնավորություն: Պապիկս շինարար է՝ ցանկանում եմ նրա նման լինել կառուցող, որպեսզի կարողանամ այս բարդ կյանքում ինձ համար կառուցեմ նորանոր բարձունքներ: Ճիշտ է, իմ հարազատներն էլ ունեն թերություններ, բայց ես նրանցից ընկալում եմ միայն լավը:

Դասղեկա ժամի օրվա պլան VI

Դասի թեման- Իմ կատարած լավ գործերը:
Անցկացման ձևը-
Նպատակը-
Կահավորումը-
Ընթացքը

Բարությունը մի լեզու է, որով կարող են խոսել համրերը և, որը կարող են լսել խուլերը: Յուրաքանչյուրը, ով իրեն համարում է զգայուն և կարողանում է դժվար **իրավիճակում օգնել ուրիշին, կարող է վստահ լինել, որ կապրի մինչև խոր** ծերություն: Շատ կարևոր է կյանքում կատարել լավ և բարի գործեր: Երբ մարդ լավ գործ է կատարում, նա հանգստանում է և հոգեկան բավարարվածություն ստանում : Ես ինքս էլ ամեն երեկո, քնելուց առաջ մտածում եմ իմ այդ օրվա կատարած լավ ու բարի գործերի մասին: Ես այդպիսի օրը համարում եմ հաջողված: Փորձում հնարավորությանս սահմաններում օգնել և՛ անծանոթներին և՛ մտերիմներիս: Երբեմն օգնում եմ մայրիկիս խոհանոցում կամ տունը մաքրելիս, երբեմն տատիկիս խաչբառ լուծելիս:
Ես սիրում եմ նաև բնությունն ու կենդանիներին: Մի անգամ ձմռանը մեր դռան արջև եկել էր մի շուն, որը շատ քախցած եր: Ես նրան սկսեցի ամեն օր կերակրել, բայց երբ եկավ գարունը նա գնաց և այլևս չվերադարձավ: Ես կարծում եմ , որ մեծ բարի գործ եմ կատարել, քանի որ կենդանիներին նույնպես պետք է օգնել: Փողոցում հաճախ եմ հանդիպում մի տատիկի, ով լավ չի տեսնում, ես նրան միշտ օգնում եմ որպիսի փողոցը անցնի: Մեր օրերում կարիք կա բարի մարդկանց և բարի գործերի: Կյանքը ակնթարթ է, եւ ինչքան լավ կլիներ, որ այն լիներ բարության ակնթարթ:

Ինձ հաճելի է բարի գործեր կատարելը: Ընդհանրապես, ես չեմ սիրում խոսել իմ կատարած լավ գործերի մասին, որովհետև դա համարում եմ մեծամտություն: Ասեմ, որ ես հաճույքով եմ օգնում հայրիկիս՝ տունը վերանոգելու հարցում: Նա ինձ խնդրում է, որ փոխանցեմ շինարարական նյութերը և գործիքները: Ես ամեն օր կարգի եմ բերում իմ սենյակը, որ օգնած լինեմ իմ մայրիկին: Այգում խաղալիս, երբ մեծ տղաները նեղացնում են փոքրերին, ես փոքրերին օգնում եմ: Շատ եմ սիրում թղթից սարքել հետաքրքիր բաներ և նվիրել հարզատներիս: Չեմ մոռանում ջրել մեր տան բույսերը: Ամռանը, փրփրապլաստից պատրաստել եմ սեղան իմ սենյակի համար: Ես ուզում եմ սարքել ռոբոտ, որը կօգնի իմ մայրիկին տան գործերում: Ես դեռ շատ եմ անելու լավ գործեր:

Դասղեկա ժամի օրվա պլան VI

Դասի թեման- Ինչ ես արել, որ ուղղես ընկերոջդ սխալը

Անցկացման ձևը-
Նպատակը-
Կահավորումը-
Ընթացքը

Դասղեկա ժամի օրվա պլան VI

Դասի թեման- Բացահայտենք մեր հայրենիքը: Էքսկուրսիա:
Անցկացման ձևը-
Նպատակը-
Կահավորումը-
Ընթացքը

Դասղեկա ժամի օրվա պլան VI

Դասի թեման-
Անցկացման ձևը-
Նպատակը-
Կահավորումը-
Ընթացքը